

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


2019 թ. ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019 թ. համար պլանավորված աշխատանքները կատարվել են համապատասխան ժամկետներում:

Հաշվետու տարում ավարտվել են գրադարանի օտարալեզու գրաֆոնդերի վերստուգման, վերանշակման, քարտագրման աշխատանքները: 2019 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գրադարանի գրաֆոնդը կազմում է **137.566** միավոր:

Գրադարանի ֆոնդերում առկա գրականությունը ըստ լեզուների բաշխվում են հետևյալ կերպ. հայալեզուն՝ 57.004, օտարալեզուն՝ 78.043 միավոր, որից 73.155-ը՝ ռուսալեզու: Գրաֆոնդի 2519 միավորը հնատիպ և հազվագյուտ գրքերն են:

Նկար 1. Հայալեզու, ռուսալեզու և օտարալեզու գրաֆոնդերի տոկոսային հարաբերությունը.




Գրաֆոնդի համալրման խնդիրը ուսումնագիտական գործընթացի բարելավման, բուհի հեղինակության և մրցունակության բարձրացման կարևոր նախապայմաններից է: Համալրման նպատակային և արդյունավետ եղանակը եղել և մնում է գրքագնումը: Սակայն հաշվետու տարում գրքագնման գործընթացը, ինչպես նախորդ տարի, ըստ էության, ձախողվել է: Շուկայի առաջարկի հիման վրա բուհի մասնագիտական ամբիոնների մասնակցությամբ գրադարանի կազմած գրքագնման ցուցակները գնումների բաժին են ներկայացվել 2019 թ. մարտին: Սակայն դրանք այդպես էլ մնացել են իբրև ցուցակներ. մրցույթի հայտարարությունն ուշացվել է, կամ էլ՝

ընդհանրապես հանվել է գնումների օրակարգից: Արդյունքում, եթե 2015 թ. գնվել է 286, 2016 թ.՝ 414, 2017թ.՝ 609, 2018 թ.՝ 91 միավոր գիրք, ապա 2019 թ. անհատական պայմանագրերով գնվել է ընդամենը 35 միավոր գրականություն:

Համալրման խնդիրը մասնակիորեն լուծվել է առանձին հեղինակներից և անհատ քաղաքացիներից ստացված նվիրատվությունների միջոցով: Այս ճանապարհով հաշվետու տարում ստացվել է 2038 միավոր գիրք:

Նկար 2. Նվիրատված և գնված գրքերի հարաբերակցությունն ըստ տարիների.




Բուհի ուսումնագիտական գործընթացին պիտու գրականության պակասը գրադարանը փորձում է մասամբ բավարարել եզակի և շատ պահանջված գրքերի պատճենահանման ճանապարհով: Հաշվետու տարվա ընթացքում վերոնշյալ եղանակով կանվել է 178 ամբողջական գիրք, մասնակի վերանորոգվել 28-ը:

Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ ընթերցողների թիվը և գրքի տացքը նկատելիորեն նվազել են: Բայց շարունակվել են աշխատանքները սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:

Գրադարանի տարեկան արձեռնումների (ընթերցողների) թիվը, հաճախումը, տացքը

<i>Ցուցանիշներ</i>	2016	2017	2018	2019
Նոր արձեռնումների (ընթերցողների) թիվը	381	508	293	386
Ընդհանուր արձեռնումների (ընթերցողների) թիվը	2164	2359	1757	1697
Հաճախումների թիվը	10186	8213	12080	9610
Տացքը	14614	9716	10788	9367

Նկար 3. Տացքի և հաճախումների թվի հարաբերակցությունն ըստ տարիների.



Այդ առումով կարևոր է հատկապես էլեկտրոնային քարտարանի և գրքի էլեկտրոնային պատվերի մասսայականացման ուղղությամբ տարված աշխատանքները: 2019 թ. յուրաքանչյուր 4-րդ գիրքը պատվիրվել է էլեկտրոնային եղանակով:

Հաշվետու տարում շարունակվել է էլեկտրոնային գրադարանի հարստացման գործը: Ներկայումս նրա 53 բաժիններում ներբեռնված են տարալեզու 10.735 գրքեր: Դրանց հիմնական մասը 2010 թ. հետո ՀՀ-ում և արտերկրում հրատարակված գրքեր են, որոնք շուկայում չկան կամ դժվարամատչելի են: Այժմ էլեկտրոնային գրադարանին անդամագրված է 1.638 ընթերցող:

Գրադարանի տնօրեն՝

Արթուր Մելիքյան
10.12.2019